



**«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն**

Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, ֆաքս: (37410) 581102, E-mail:  
[info@hetq.am](mailto:info@hetq.am), [hetq@hetq.am](mailto:hetq@hetq.am), URL : [www.hetq.am](http://www.hetq.am)

---

22.09.2021թ.

**ՀՀ Արմավիրի մարզպետ  
Պարոն Համբարձում Մաթևոսյանին**

**«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի  
«Հետք» թերթի լրագրող  
Գրիշա Բալասանյանից  
Հեռ. 093-82-26-80, e-mail: [grisha.balasanjan@hetq.am](mailto:grisha.balasanjan@hetq.am)**

Հարգելի պարոն *Մաթևոսյան*,

«Հետք» էլեկտրոնային թերթը հոդված է պատրաստում: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9, 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

1. Արմավիրի մարզի մի շարք համայնքներում տեղադրված են սարքավորումներ՝ «Թալինի ջուր» գրառմամբ, որից բնակչությունը, գումարի դիմաց խմելու ջուր է վերցնում: Ո՞ր համայնքներում են տեղադրված այդ սարքավորումները և ինչ քանակությամբ: *Տեղեկատվությունը տրամադրել ըստ համայնքների նշելով տեղադրված սարքավորումների թիվը յուրաքանչյուր համայնքում:*

2. Որ ընկերության կամ անհատի կողմից են համայնքներում տեղադրվել այդ սարքավորումները, ովքեր են շահագործողները: *Տեղեկատվությունը տրամադրել ըստ համայնքների:*

3. Այդ սարքավորումները տեղադրելու համար արդյո՞ք համայնքապետարանների կողմից տրամադրվել են համապատասխան թույլտվություններ: Եթե այո, ապա ու՞մ են տրամադրվել թույլտվությունները և ինչ պայմաններով (պայմանագրային արժեք, որևէ նախապայման և այլն): Եթե ոչ, ապա ինչ քայլեր են ձեռնարկվում: *Տեղեկատվությունը տրամադրել ըստ համայնքների, թույլտվություն ստացած կամ շահագործող ընկերությունների:*

4. Քանի որ այդ սարքավորումների միջոցով խմելու ջուր է վաճառվում, արդյոք սարքավորումները ենթարկվում են ստուգումների՝ սանիտարահակահամաճարակային

տեսանկյունից: Եթե այո, ապա ինչ ժամանակահատվածում և ում կողմից: Եթե ոչ, ապա ինչ քայլեր են ձեռնարկվում: *Տեղեկատվությունը տրամադրել ըստ համայնքների:*

***Կանխավ շնորհակալություն***

***Դիմող՝ Գ. Բալասանյան***

